

ՆԱԽԱԳԻՐԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՉԱՅՆԴԱՐԶԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ

Հնդեվրոպական լեզվաբանության մեջ ընդունվում է ձայնդարձի եռաստիճան համակարգը. *e *ē (բարձր աստիճան), *o, *ō (միջին աստիճան) և որո կամ *ə (ստորին աստիճան):

Հնդեվրոպական հիմք-լեզվի ձայնդարձի այս համակարգը ուսումնասիրվել և նկարագրվել է գրեթե բոլոր հնդեվրոպաբանների կողմից, սակայն առավել հանգամանալից՝ Ա. Մեյեր², է. Բենվենիստի³ աշխատություններում և Յու. Պոկորնիի հայտնի բառարանում⁴:

Հայերենի ձայնդարձը առանձնապես խորն է ուսումնասիրել ակադեմիկոս Հր. Աճառյանը իր մի շարք աշխատություններում՝ «Հայերէն արմատական բառարան» (հ. հ. Ա—է, Երևան, 1926—35), «Հայոց լեզվի պատմություն» (մասն 1, Երևան, 1940) և «Լիակատար քերականություն հայոց լեզվի» (հ. 3, Երևան, 1957)՝ Այս վերջին աշխատության մեջ (գլ. Ե, էջ 23—57) հեղինակը տվել է հայերենի ձայնդարձի ամփոփ քննությունը, միաժամանակ մեջ է բերել ձայնդարձ ներկայացնող արմատների ցուցակը (ելնելով «Արմատական բառարան»-ից):

Վերևում հիշատակված (և չհիշատակված) բոլոր աշխատություններում էլ հնդեվրոպական քույր լեզուների, այդ թվում հայերենի՝ ձայնդարձ ներկայացնող արմատները ամեն դեպքում անմիջապես բխեցվում են հիմք-լեզվից:

Սակայն երբ ավելի մոտիկից ենք ուսումնասիրում հայերենի բնիկ արմատները, տեսնում ենք, որ նախադրային հայերենը ունեցել է ձայնդարձի՝ հնդեվրոպական հիմք-լեզվից անկախ դառնալով մի համակարգ:

Ի՞նչ հիմքեր կան այսպես պնդելու:

Առաջին՝ հնդեվրոպական հիմք-լեզվում արմատները տարբեր ձայնդարձներով են հանդես գալիս ոչ միայն բաղադայնով (ու ձայնորդով), այլև ձայնավորով սկսվելիս (հմմտ. *el-/*ol-): Մինչդեռ նախադրային հայերենի արմատները ձայնդարձ կամ ձայնդարձնեո ունենում են այն դեպքում, երբ սկսվում են բաղադայնով (կամ ձայնորդով): Ահա թե ինչու. օրինակ, ած- (թափել) բուն հայկական արմատը (հնիս. օք-), չնայած ունի իմաստային 15 ճյուղավորում, չունի սակայն և ոչ մի ձայնդարձ: Այդպես նաև ակն (հնիս. *oknos-), որն ունի իմաստային 9 ճյուղավորում:

¹ Սույն հոդվածում հարցը քննվում է բառակազմության տեսանկյունից:

² Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.—Л., 1938.

³ Индоевропейское именное словообразование, М., 1955.

⁴ Julius Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, I Band, Bern, 1959.

Ձայնդարձը հայերենի հոլովման և խոնարհման համակարգերում ուսումնասիրել են պրոֆ. Գ. Զահուկյանը (Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, 1959) և Թ. Ղարաղյուլյանը (Հին հայերենի խոնարհման համակարգի ծագումը, Երևան, 1961):

Եվ եթե մենք այնուամենայնիվ ունենք ձայնավորով սկսվող արմատների ձայնդարձներ, ապա սրանք, պետք է ենթադրել, ավելի հին են, քան անկախ դարձած նախագրային հայերենը, և հանգում են անմիջապես հնդեվրոպական հիմք-լեզվին: Հմմտ. հնիս. *evō, *ovō, *ves- > հյ. *qł- (q-qł-ստ), ագ-անիմ (հագնել), աղ (թիկնոց), կամ՝ հնիս. *srov- > հյ. ոռոգ-ել, առոգ (աղբյուր, ոռոգիչ ջուր), առու (<հնիս. *sru-), կամ՝ ամ (<հնիս. *sam-) «տարի» — նմ-, որից՝ Լոնմեան (եռամյա) և այլն⁶:

Ի տարբերություն հնդեվրոպական հիմք-լեզվի, նախագրային հայերենում ձայնդարձի ոլորտի մեջ ընդգրկվում են բացառապես այն արմատները, ուր ձայնավորին նախորդում և հաջորդում են բաղաձայններ կամ ձայնորդներ, այլ կերպ ասած՝ ուր ձայնավորը երկու կողմից «փակված է»: Օրինակ՝ չր-չոռ, շոռ (երաշտ), կիր-կուլ (քաղել, որից՝ այգեկուլ) և այլն (տե՛ս նաև ստորև բերվող աղյուսակը):

Մյուս կողմից, նախագրային հայերենի՝ ձայնդարձի ենթարկված արմատները միավանկ են: Բաղմավանկ բառերի մեջ ձայնդարձը, ինչպես հնդեվրոպականում, հանդես է գալիս այս կամ այն ձայնավորումով կաղմված ածանցի ձևով: Հմմտ. աղ-ալ (հնիս. *ał-) — ալ-ևւր — ալ-իւր — աղ-աւրիւ, կամ՝ հարսն — հարս-իւն — հարս-ամբ — հարս-ունի և այլն:

Երկրորդ՝ հայտնի է, որ հնդեվրոպական հիմք-լեզուն ուներ երկար ա ձայնավոր, իսկ կարճ ա-ն հաղվաղեպ էր: «Ըստ արդի գիտության, — գրում է ակադ. Հր. Աճառյանը, — ա ձայնավորը հնդեվրոպական լեզվի մեջ գտնվում էր միայն մի խումբ մանկական բառերի մեջ և մի քանի մասնավոր բառերի մեջ, այն էլ առհասարակ բառակազմում», օրինակ՝ հուն. 'αἶρος, լատ. aeger, գոթ. airts, սախս. aṣra, հյ. ագարակ⁷:

Իսկ հայերենը շատ դեպքերում ունի ստորին ոչ թեզդրո, այլ ա ձայնավորումը, որից հետո բառը հաճախ աճում է -յ- կամ -ւ- ածականով (հմմտ. խայր, խաւր):

Ի՞նչ էլ ասում այս մասին «վիճակագրությունը»: Եթե նույնիսկ չհաշվենք հայերենի բնիկ այն արմատները, որոնք մեզ ներկայանում են մեկ ձայնավորումով (բարձր, միջին կամ ստորին), այլ միայն նրանք, որոնք ներկայանում են զույգ կամ լրիվ ձայնդարձով, — ապա կտեսնենք, որ սրանց մոտավորապես երկու երրորդը անպայման ունի ա ձայնավորումը (այն էլ բառամիջում, մի բան, որ հնդեվրոպական հիմք-լեզվին, ինչպես տեսանք, հատուկ չէր):

Նրբորդ՝ եթե հնդեվրոպական հիմք-լեզվի համար ընդունվում է եռաստիճան ձայնդարձային համակարգը, ապա հայերենը շատ հաճախ ի հայտ է բերում մի միջանկյալ աստիճան ևս՝ ի ձայնավորումը, ինչպես՝ չոռ-չիւր. խնդ // շնդ — շիլ, ծնդ — ծիլ, ծիդ (տե՛ս նաև ստորև բերվող աղյուսակը):

Այս ի ձայնդարձը ավանդաբար մտցվում է բարձր աստիճանի (e, ե) մեջ: Բայց նախահայերենի համար այն անկախ գոյություն ունի:

Ավելին. ի ձայնդարձով արմատները հաճախ վերջին բաղաձայնից կամ ձայնորդից առաջ ստանում են -ւ- ածական: Օրինակ՝ ծիդ — *ծիւղ, որից՝ ղնդծիւղ > ընծիւղ:

⁶ Վերջին երկու դեպքերում (ոռոգ // առոգ, ամ // *նմ-) ուշագրավ է այն, որ հնդեվրոպական համապատասխան արմատները դարձյալ սկսվում են բաղաձայնով:

⁷ Ուխակատար քերականություն, հ. 3, էջ 29:

Այստեղ անհրաժեշտ է ավելացնել հայերեն ձայնդարձի մի այլ օղակ՝ ու (ou), որն ավանդաբար մտցվում է միջին աստիճանի (o, u) ձայնդարձի մեջ՝ Հմմտ. լեղ — լիւլ — լող — լուլ, սին — սուն:

Այս ու ձայնդարձը երբեմն ստացվում է ո-ի աճմամբ ու- ձայնորդով, բայց ավելի հաճախ ինքնուրույն գոյություն ունի:

Չորրորդ՝ գուցե և չարժեր խոսել նախագրային հայերենի ձայնդարձների ինքնուրույն համակարգի գոյության մասին (մանավանդ որ քիչ թվով արմատներ ունենք, որոնք ներկայացնում են ձայնդարձի բոլոր աստիճանները, թեև, անշուշտ, արմատների պարզական թիվը չէ որոշողը), — եթե այդ նույն ձայնդարձները ձայնավորման ձևով հանդես չգալին նաև հոլովման և խոնարհման մեջ. ե-ի-ո-ու-ա: Եվ հիրավի մի՞թե ճիշտ չի լինի պնդել, որ հիշյալ ձայնդարձները նախագրային հայերենի ինքնուրույն համակարգի տարրերն են, որոնք հետևողականորեն դրսևորվում են նրա (նախագրային հայերենի) բառակազմության, հոլովման և խոնարհման համակարգերում:

Եվ ոչ միայն հիշյալ համակարգերում: Եթե քննելու լինենք հայերենի շեշտափոխական հնչյունափոխությունը, կտեսնենք, որ այդ հնչյունափոխությունը նույնպես գործում է ձայնդարձի՝ հայերենին հատուկ համակարգի շրջանակներում. արմատի (կամ բառի) է հնչյունը, շեշտը կորցնելով, փոխվում է ի-ի, ինչպես՝ գէշ — գիշակեր, ի-ն՝ ր-ի կամ զրոյի, ինչպես՝ կի՛ն — կրնոջ, մաւմին — մաւմնոյ: Ը-ի կամ զրոյի է փոխվում նաև միջին ձայնդարձի ո-ն, երբ ու ձայնորդի հետ կազմում է ու երկբարբառը, ինչպես՝ ֆուն-ֆրնել. մանուկ-մանկան: Կամ վերցնենք իւ երկբարբառի հնչյունափոխությունը ու երկբարբառի. պատիւ-պատուոյ: Եվ այլն:

Այսպես ուրեմն, հայոց լեզվի ձայնավորների (ու երկբարբառների) հնչյունափոխության համակարգը, որը, պատմական որոշակի փոփոխությունների ենթարկված, հարատևում է մինչև օրս, հիմնված է փաստարկն է հօգուտ նախագրային հայերենի ձայնդարձի անկախ համակարգի գոյության:

Վերջապես, կա և վեցերորդ փաստարկը:

Պատմականորեն էլ բոլորովին անհավանական ու աներևակայելի է, որ հայերենի բառակազմությունը հնդեվրոպական հիմք-լեզվից մինչև զրաբար իր զարգացման շրջանում (մի շրջան, որ ընդգրկում է տառնյակ դարեր, եթե չասենք հաղարամյակներ) դոփեր ձայնդարձի ժառանգված համակարգի շրջանակներում: Երբ մեզ ծանոթ հնդեվրոպական շատ լեզուներ մինչև օրս էլ պահպանած ունեն ձայնդարձի իրենց համակարգը: Հմմտ. գերմաներենի Ablaut-ը, առանց որի չի կարելի պատկերացնել արդի գերմաներենի քերականությունը, անգլերենում՝ մասնակի երևույթներ (foot-feet, get-got և այլն), ռուսերենի чередование гласных, որ դեռ գործում է ձևաբանության մեջ (брос-ать—раз-брас-ывать), մասամբ՝ բառակազմության մեջ (зер-кало—в-зир-ать -- в-зор -- зар-иться — зр-еть): էլ չենք խոսում հին հունարենի և լատիներենի մասին:

Ինչ վերաբերում է հայերենին, ապա զրաբարում արդեն ձայնդարձը համարյա չէր գործում բառակազմության մեջ⁸, բայց դրա փոխարեն լայնորեն

⁸ Ձայնդարձին ու աճմանը, իբրև բառակազմական միջոցների, զրաբարում փոխարինելու եկան բառարարացումն ու բառաձանցումը: Կրկնությունը մնաց՝ նոր օրինաչափություններով: Այնպես որ բառակազմության տեսակետից զրաբարը, նախագրային հայերենի համեմատությամբ, միանգամայն «ժամանակակից» լեզու էր:

գործում էր հոլովման և խոնարհման մեջ: Իսկ արդի հայերենում, կարելի է ասել, ձայնդարձը, որպես համակարգ, չքացել է:

Այս բոլորից հետո կարելի է արդեն ընթերցողների ուշադրությանը հանձնել հետևյալ աղյուսակը, որը նրանց քիչ թե շատ պատկերացում կտա նախագրային հայերենի ձայնդարձի ինքնուրույն համակարգի մասին: Այստեղ մենք տալիս ենք այն արմատները միայն, որոնք ներկայացնում են ձայնդարձի համեմատաբար ամբողջական աստիճանները: Աղյուսակի հիմքում ընկած են ալադեմիկոս Հր. Աճառյանի «Հայերէն արմատական բառարան»-ում եղած, ինչպես նաև նրանից հետո արված ստուգաբանությունները: Ամբողջովին մեծատառերով են տրվում այն արմատները, որոնք ստուգաբանված են տողերիս գրողի տարբեր հոդվածներում:

Ե. է (ey)	Ի	Ո, ՈԻ (ou)	Ա
ԽԵԹ, ԽԷԹ	ԽԻԹ	ԽՈԹ, ԽՈՅԹ, ԽՈԼԹ	ԽԱՅԹ, ԽԱԼԹ
ԼԵԳ	ԼԻԼԳ	ԼՈՂ, ԼՈՅԳ, ԼՈԼ(ալ), ԼՈԼԳ	ԼԱԼԳ
ՊԵԳ	ՊԻԼԳ	ՊՈԳ, ՊՈՅԳ, ՊՈԼԳ	ՊԱԼԳ
ՉԵԳ(ՃՅՈԼԳ)	ՉԻԳ. ՇԻԻ, ՇԻԻՂ	ՇՈՂ, (ն)ՉՅՈԼ	
ԽԵՂ, ԽԷՂ		ԽՈՂ	ԽԱՂ
ՉԵԳ // ԽԵԳ	ՉԻԼ, *ՉԻԼ—ԻՆՔ > ՉԻՆՔ	ԽՈԳ(ԽՈԳԵԼ)?	ՉԱԳ(ԻԼ) «սխալվել»
ԳԵԼ, ԳԷԼ, ԳԵԳ(ձ)	ԳԻԼ, ԳԻԳ		ԳԱՅ(աթ), ԳԱԳ(ձն)
ԳԵԼ, ԳԵԳ	ԳԻԼ	ՑՈԼ, ՑՈՂ(ՈԻՆ)	ՑԱՅԼ(Գ), ՑԱԻՂ (ՈԻՆ)
	ՔԻԼ	ՔՈԼ(ԻԿ), ՔՈՂ(ՏԻԿ)	ՔԱԻՂ
ՀԵԳ	ՀԻԳ, ՀԻԼԳ	ՀՈԼ(ԻԿ), ՀՈԼԳ ԽՈԼԳ	
	ՋԻՆ, *ՋԻՆՋ—ԵԼ > ՋԻՆՋԵԼ	ՋՈԼՆՋ	ԳԱՆ
ՃԵԳ(Բ)	ՃԻԳ, ՃԻԻ, ՃԻԻՂ	ՃՈԳ(ԵԼ)	ՃԱԳ, ՃԱԲ (*ՃԱԳԲ)
ԺԵԳ	ԾԻԼ, ԺԻԳ, *ԺԻԼԳ, ԾԻԻ		ԾԱՂ(ԻԿ)
	ՍԻՆ	ՍՈԼՆ	ՍԱՆ

Այն աստիճան որոշակի ու հետևողական է գործում ձայնդարձի այս համակարգը նախագրային հայերենում, որ համարձակ կերպով կարելի է ասել. եթե մի արմատ ձայնդարձ (կամ ձայնդարձներ) ունի, բայց մինչև այժմ դեռ ստուգաբանված չէ, չի կարելի կասկածել, նա հին է, բնիկ, հնդեվրոպական, և նրա հետքերը պետք է փնտրել հնդեվրոպական հիմք-լեզվի ու քույր լեզուների մեջ:

Վերցնենք մի-երկու բնորոշ օրինակ այն ճյուղավորված արմատներից, որոնք դեռ «սպիտակ բիծ» են մեր ստուգաբանական բառարաններում:

ԽԻԽ (խորիս) — ԽՈԽ, ԽՈԻԽ, ԽՈԼ—Բ (ավլած աղբ, աղտեղություն) — ԽԱԼԽ // ԽԱԼ (խորիս), ԽԱԼ—Բ (աղտեղություն):

ԴԱՂԲ (սահել) արմատը ունի բարբառային գէր ձայնդարձը՝ «վնաս, հան-

9 Հայերենի մի քանի բառերի ստուգաբանության շուրջը (ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1955, № 9), Ստուգաբանական վերլուծություններ (անգ. 1956, № 7), Մի քանի ստուգաբանություններ («Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 1):

* Ճաք (*ճաղք) բառի ստուգաբանությունը տես Ա. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1, Երևան, 1962, էջ 145—146:

ցանք» իմաստով, սրանից էլ՝ զիր-վոր (մեղապարտ, հանցավոր) և զր-ել «սա-
հել. մոլորվել. սխալվել» (<*զիր+ել կամ *զուր+ել)¹⁰,

Չենք կարող. իհարկե, անտեսել մեր լեզվի այն փոխառյալ արմատները,
որոնք տարբերակներ ունեն։ Բայց դրանք ոչ թե ձայնդարձի ճանապարհով
առաջ եկած տարբերակներ են, այլ միևնույն լեզվից պանապան ժամանակնե-
րում կատարված փոխառություններ։

Ահա մի բնորոշ օրինակ. պահլավերեն *xuan (սեղան) բառը նոր հնչումով
հանդես է գալիս xān և xōn ձևերով։ Եվ ահա հայերենն էլ պահլավերենի հա-
մապատասխան ձևերից փոխառյալ ունի՝ խան «ափսե, սինի», խոն «սեղան» //
խոն-ասէր «համեղ ուտելիք և խմելիք սիրող», խուն-աւագուրիւն «սեղանապե-
տություն»։

Փոխառյալ արմատները հայերենում ձայնդարձներ չեն ունենում։ Ինչո՞ւ
Որովհետև, նախ՝ փոխառյալ են, հետո՝ այնպիսի ժամանակաշրջանի փոխա-
ռություններ, երբ ձայնդարձը իբրև բառակազմական միջոց այլևս չէր գործում
հայերենում։

Անհրաժեշտ ենք գտնում այստեղ շոշափել նաև այն հարցը, թե երբ են ար-
մատները ձայնդարձ ունենում։

Բնական է, որ հնդեվրոպական արմատներն ունենում են պարտադիր եր-
կու տարբերակ (e—o)։ Ձայնդարձը, սակայն, պուտ հնչյունաբանական երևույթ
չէ, այլ նրա հիմքում ընկած են իմաստաբանական գործոններ։ Հայերենում,
օրինակ, ոչ բոլոր բնիկ արմատներն են, որ ձայնդարձներ ունեն, այլ նրանք,
որոնք փոքրիշատե լայն իմաստային ճյուղավորում ունեն։ Այսպես՝ բեկ-
(կտրել) արմատը (հնիս. *bheg-) չունի ոչ մի տարբերակ, որովհետև չի ունեցել և
իմաստային ճյուղավորում։ Այդպես նաև շատ այլ բնիկ արմատներ։ Մինչդեռ
հնիս. *bher- (ծեծել. ծակել. ճեղքել. փորել) արմատից հայերենում ունենք երեք
տարբեր, բայց նախնական իմաստի հետ սերտորեն կապված արմատներ՝
բեր-ան — բիր-բա(ր)հ։ Կամ վերցնենք զել (ոլորք) արմատը (հնիս. *vel-,
*velu-)։ Սրան կցվում են՝ զել (ծուռ), զեղ-ծ (բաղեղ), զաղ-ծն (բաղեղ)։ Ինք
(հնիս. *ǵer-) «կերակուր, ուտելիք» — կուր «անասունների ուտելիք» (հմմտ.
և կերակուր «ուտելիք» բառը) — *կուր- > *կուր-կուր-դ > կոկուրդ «որկոր»։ Եվ
այլն։

Այսպես ուրեմն. ձայնդարձը իր ժամանակին հանդիսացել է արմատների
իմաստային տարբերակման և՛ միջոցը, և՛, միաժամանակ, հետևանքը¹¹։ Այս
թեզը մենք կկոչենք ձայնդարձի համանիշային տեսություն։

Բայց և այնպես, ի՞նչ նշանակություն ունի նախադրային հայերենի ձայն-
դարձի համակարգին վերաբերող վերոշարադրյալ հարցադրումը։

¹⁰ Բրբ. զէր ձևը կարծես թե կարելի էր ձայնդարձ չհամարել, այլ դիտել իբր հետևանք ուս-
այ > բրբ. է տարածված հնչյունափոխության (հմմտ. հայեր — հնէր)։ Սակայն է-ի-ը հաջորդա-
կան հնչյունափոխությունը զէր. զիր-վոր և զրբ-ել բառերի մեջ (մի բան, որ իր զուգահեռ
չունի). — մեզ հիմք չի տալիս այդպես վարվելու։

¹¹ Ձայնդարձի և այլ միջոցներով արմատների (կամ բառերի) տարբերակման մասին պա-
նաղան առիթներով խոսել են՝ ակադ. Մ. Աբեղյանը (Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ
162), պրոֆ. Գ. Սևակը (Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Ե., 1955, էջ 107—108,
143—147), պրոֆ. Էդ. Ազալանը (Լեզվաբանության ներածություն, Ե., 1963, էջ 198), դոկտոր
Ա. Մուրվալյանը (Հայոց լեզվի բառային կազմը, Ե., 1954, էջ 122—128) և այլք (բոլորն էլ՝
ակադ. Հր. Աճառյանի և մյուս հնդեվրոպաբանների արժարժածի շրջանակներում)։

նախ՝ այն օգնում է ավելի ճիշտ ներկայացնելու նախագրային հայերենի բառակազմությունը:

Երկրորդ՝ հավաստում է քույր լեզուների վաղեմի ինքնատիպությունը:

Երրորդ՝ հնարավորություն է ընձեռում տալու ստուգաբանությունը այն բնիկ հայերեն արմատների, որոնց համապատասխան ձայնարձները չեն արձանագրված Յու. Պոկոռնիի սովորածավալ բառարանում և չեն հայտնաբերված քույր լեզուներում:

Վերջենք ծաղիկ բառը: Մինչև այժմ այն ստուգաբանված չէր: Մեծ վերապահումով այն կապում էին ծի-ծաղ բառի հետ¹², մանավանդ որ ունեին խիստ գայթակղիչ մի զուգահեռ՝ Թրք. (պարսկերենից) gul «վարդ» — gülmeq «ծիծաղել»:

Բայց նայենք վերևում բերված աղյուսակին և կտեսնենք, թե նա ինչ հաջող է իր տեղը բռնում ձայնարձների հայկական համակարգում՝ ձևով և իմաստով նույնարմատ լինելով ծեղ-ծիլ // ծիղ բառերին և ներկայացնելով նրանց ստորին ձայնարձը (թեև Յու. Պոկոռնիի ընդարձակ բառարանում մենք չենք գտնում սպասվող ^g և ձայնարձը):

Ահա և ծաղիկ բառը գտավ իր տեղը հայերենի ձայնարձների «պարբերական աղյուսակ»-ում:

П. С. БЕДИРЯН

СИСТЕМА ЧЕРЕДОВАНИЯ ГЛАСНЫХ АРМЯНСКОГО ЯЗЫКА (ДОПИСЬМЕННЫЙ ПЕРИОД)

Р е з ю м е

В настоящей статье вопрос о чередовании гласных (нем. Ablaut, фр. rphonie) рассматривается с точки зрения словообразования.

До настоящего времени в трудах по индоевропейской лексикологии варьированные корни индоевропейских языков, в их числе и армянского, в каждом отдельном случае выводились непосредственно из языка-основы. Однако более тщательное изучение исконных армянских корней привело автора к выводу, что в армянском языке (дописьменного периода) была своя специфическая, независимая от языка-основы система чередования гласных (кстати, своя система чередования гласных и у русского, немецкого, английского и других индоевропейских языков).

Итак, система чередования гласных индоевропейского языка-основы *e, *ē — *o, *o — нулевая или *ə.

А система же армянского языка выглядела так: e, ey — i — o, ou — a.

¹² Տե՛ս, ի միջի այլոց, և Georg Renatus Solta, „Die Stellung des Armenischen im Kreise der Indogermanischen Sprachen“, Վիեննա, 1960, էջ 423, ծան.